


ՐԱԺՆԵԳԻՆ
Մ. ՆԱՀԱՆԳՈՅ ՀԱՄԱՐ
Տարեկան \$1.50
Կեցամսայ 0.85

ԱՐՏՈՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան \$1.50
Կեցամսայ 0.85

Ուրազբուրթ եւս-ըրկուս
նամակ կամ ծրար ետ
չեն վերադարձուիր
ԳԻՆ 3 ՍԷՆԹ.



Հայրենեաց

ՀԱՅԻՆ
ՊԱՐՏՈՒՄ
AN ARMENIAN WEEKLY.

AMERICAN HAI PUBLISHING Co
P. O. Box 379, Worcester, Mass

Entered at the Post Office at
Worcester, as Second-Class
Mail Matter.

Subscription \$1.50 a Year.

ՇԱՐԱԹ ԱՌԵՐՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱՍՆԱԻՐ ԱԶԳ

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Մենք խնդրեցինք որ մեր Գործա-
կաները ամէն ամիս անգամ մը իրենց
քով դանձուած դրամը հաճին մեզ զը-
կել: Աւելորդ չէ՞ ըսել թէ մենք ա-
ռանց մեր գործակալներու դրամական
կանոնաւոր առաջուճին ինչ դժուարու-
թեան կը մատնուինք: Իրաւունք չու-
նինք սպասելու որ մեր գործակալները
գոնէ այս արմատական միջոցին մէջ
մեզի օժանդակ հանդիսանան:

Կը խնդրենք քիչ մը ձանձորթ յան-
ձն առնէք ու ձեր հաշիւը ժամանակին
մեզ հասուցէք մեզ դժուարութեանց
չենթարկելու համար:

Կը սպասենք յառաջիկայ շաբթուն քո-
ւր գործակալներուն քով եղած դրամնե-
րը ստանալ:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՈՅ ԳԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Առ այժմ Միացեալ Նահանգաց Ազ-
գային Որհնդարանը զբաղեցնող մեծա-
զոյն և կորեւորագոյն խնդիրն նորստաց
գաղութներու կառավարութեան ձեռն է:
Ամերիկեան Սահմանադրութիւնն իմրա-
զրուեցաւ ժամանակ մը երբ ազգային
գրօշակին պաշտպանութիւնը վայելող
ամէն անհատ իւր գրացոյն հասա-
սար կը նկատուէր, և իրապէս այդ
պէս էր: Երկիրն կը բաղկանար միայն
13 նահանգներէ, որոց բնակչաց վարչա-
կան փորձառութիւնք և իմացական ու
բարոյական կարողութիւնք առաւել կամ
նուազ նոյն մակարդակին վրայ էին: Գծ-
ուար է երեւակայել թէ ամերիկեան
այն մեծ պետական մարդն, Թոմաս ձե-
ֆըրընը երբ յօրինեց Սահմանադրութիւ-
նը խորհեցաւ թէ օր մը ամերիկեան քա-
ղաքացիութիւնն իւր մէջ պիտի պարու-
նակէր հեռուստը և մերձաւոր կղզեաց
խառնածին ժողովուրդները, որք կրօ՞ ի-
ւելուաւ, ցեղով ու գոյնով, փորձառու
թեամբ և մշակութեամբ իսկապէս եան-
քինեքէն այսքան տարբեր պիտի լինէին:
Եւ ուստի իւր «Յայտարարութիւն Ան-
կախութեան» կոչեցեալ յիշատակելի գը-
րութեան կեդրոնական խորհուրդը բրաւ
սա սկզբունքը թէ «կառավարութիւնք
կառնուն իրենց հեղինակութիւնը կառա-
վարելոց համանութեան»: Այս յայտա-
րարութիւն կենթադրէր թէ կառավար-
եալք կառավարութեան հեղինակութիւն
տալու աստիճան մշակեալ ու փորձառու
էին: Դժուար է տեսնել թէ երեք միլիոն
զարգացեալ ժողովուրդոց իմացական և
վարչական կացութիւնը բացատրող գը-
րութիւն մը ինչպէս կիրառելի կրնայ լի-
նել մեծ և համաշխարհական ազգի մը, որ
իւր աշխարհագրական սահմաններէն ան-
գին անցնելով կը ձեռնարկէ կառավար-

րել հեռուստը կղզիներ, որոց բնակիչք
իրենց երակներուն մէջ ունին ասիական
ինչպէս նաև եւրոպական մանկուկան ինչ-
պէս նաև կովկասեան արևել: Ինչպէս
նոր գինին հին տիկերու մէջ լեցունելու
է: Ահա «կարծր ընկողջ մը զոր կտորել
չատ դժուար է», ինչպէս կըսէ անգլիա-
կան առածն: Խնդիր մը որոյ գոհացու-
ցիչ լուծումէն կարու՞մ պիտի ունենայ
ամերիկեան գաղթային ձեռնարկին յա-
ջողութիւնն:

Նորստաց գաղթականութեանց վար-
չութեան ձեռնարկու մէջ հիմնական
երկու սկզբունքներ կան, որոց միոյն
կամ միւսոյն որքեզրմամբ կառավարու-
թեան ձեռն կրնայ որոշուի: Ամերիկեան
կառավարական առանձնութիւնն սա է թէ
երբ նոր երկիր մը կամ նոր ժողովուրդ
մը քաղաքականապէս կը յարի այս երկ-
րին, եթէ նահանգային անկախ կառա-
վարութիւն մը կազմելու չափ իմացա-
կան ու դրամական պաշար և թուային
ոյժ չունի, կը կազմէ կէս անկախ վար-
չութիւն մը որ կեդրոնական կառավարու-
թեան վարչական գործոց մէջ քուէ-
սոււ ձայն չունի, և որոյ կառավարիչն
կը կազմուի Միացեալ Նահանգաց Նա-
խագահին կողմանէ: Մինչդեռ ինքնօրէն
նահանգք իրենք կրնարեն իրենց կառա-
վարիչները և օրէնդրական ժողովոց ան-
դամները: Սակայն նկատելի է թէ այս
թէրթորներ կը կազմուին միշտ սա հաս-
կողութեամբ թէ օր մը անոնք ևս պիտի
բարձրանան միւս ինքնօրէն նահանգաց քա-
ղաքական աստիճանին և ի պատիւ իրենց
ազգային գրօշակին վրայ աստղ մը կամ
աստղեր պիտի աւելնան: Իւր միջանկեալ
անեղևութիւն սա ըսեմ թէ ազգային գրօ-
շակին վրայ տեսնուած 13 գունաւոր գի-
ծերը նախնական 13 նահանգաց նշանն,
իսկ աստեղաց իւրաքանչիւրն ներ-
կայ իւրաքանչիւր նահանգի նշանէ:
Լաւ այս բոլոր ինքնօրէն նահանգներ և
թէրթորներ ամերիկեան հողին վրայ
լինելով, անոնց վարչական անօրինութիւ-
նը երկրաբարական և ցեղաբանականութե-
քժուարութեանց չէր հանդիպեր: Սա-
կայն Սպանիական վերջին պատերազմին
բերմամբ ամերիկեան ազգն ունեցաւ այն
պիտի ստացումներ, որք մայր երկրին
հետ երկրաբարական շարունակութիւն չու-
նին, և որոց բնակիչք ցեղով ու լեզուաւ
հիմնովին տարբեր են: Այս նորստաց կղ-
զեաց և կղզեխմբոց գիւրքն ինչ պիտի
ըլլայ մայր երկրին հանդէպ: Երկու մէ-
թոտներ կան որքեզրուելու: Անոնք կամ
թերթորներ պիտի կազմեն, միշտ սա
հասկողութեամբ թէ օր մը ինքնօ-
րէն նահանգներ պիտի լինին, և ազգա-
յին Որհնդարանին մէջ երեքփոխան
ներ պիտի ունենան, և կամ անգլիական մէ-
թոտով միշտ գաղթականութիւններ պի-
տի մնան, իրենց կառավարիչք Նախա-

գահին կողմանէ պիտի կարգուին, և
չափաւոր ինքնօրինութիւն վայելելով
հանգրձ կեդրոնական խոհարարներն
մէջ ներկայացուցիչներ պիտի չունենան:
Այս մէթոտներուն առաջինն կոչու-
է Ծաւալումն որ մայրերկրը իւր հեռա-
ւոր ստացումոց քաղաքականապէս հա-
ւասար կը նկատէ կամ փոխադարձաբար,
իսկ վերջինն կոչուած է կայսերականու-
թիւն ուր մայր երկրին միշտ գաղթա-
կանութեանց վրայ արող ձայն մը ու-
նի: Յայտ իսկ է թէ կայսերականու-
թեան դրութիւնն իւր մէջ կը պարու-
նակէ ծաւալումն դրութիւնը: Այս երկու
դրութեանց միջև եղած հիմնական տար-
բերութիւնն երկրակալութեան մէջ չէ, այլ
նորստաց գաղութները կառավարելու ձե-
ւին մէջ է: Զորքինակ, աշխարհի մե-
ծագոյն կայսերական պետութիւնն, Անգ-
լիա, իւր գաղթականութիւնները կա-
ռավարած է և կը կառավարէ կայսերա-
կանութեան մէթոտով: Վիքթորիա Թա-
գուհին Անգլիոյ, սակայն կայսրուհի է
Հնդկաստանի: Այսինքն, Հնդկաստանի
ընդհանուր կառավարիչն կամ փոխար-
քայն կը կարգուի Մեծին Բրիտանիոյ
Վեհապետին կողմանէ, և Հնդկաստանի
ժողովուրդն երեսփոխաններ չունի կամ
չկրնար ունենալ լոնտոնի Որհնդարա-
նին մէջ: Այս էր պատճառն որ կլատու-
թոնի Իրլանտական ժողովին այնքան բու-
ռըն հակառակութեան բաղնջացաւ և վիժե-
ցաւ: Եթէ յաջողէր, Անգլիոյ գաղթային
վարչութեան ձեռն հիմնապէս պիտի յեղա-
շրջէր: Ամերիկեան թէ Ծերակայտին և թէ
Երեսփոխանական ժողովոյ անդամք այս
հրատապ խնդրոյն վրայ երկու կուսակ-
ցութեանց բաժնուած են: Ոմանք կը ջա-
տագովեն ծաւալումն մէթոտը, առար-
կելով թէ կայսերականութեան մէթոտն
ամերիկեան Սահմանադրութեան ոգւոյն
հակառակ է: Իսկ ոմանք կը ջատագովեն
կայսերականութեան մէթոտը, ըսելով
թէ նորստաց գաղթականութեանց ժո-
ղովուրդք իմացապէս խոնարհագոյն դա-
սակարգի վերաբերելով ամերիկեան հաս-
տատութեանց ոգին և հանձնքը պիտի
չըմբռնեն, և յայտ ազգային Սահմա-
նադրութեան տառն թէ և պիտի պահ-
պանուի, սակայն ոգին պիտի սպաննուի:
Կայսերականութեան մէթոտին ջատա-
գովք իրենց օրինակ ունին Անգլիոյ գաղ-
թային վարչութեան փառաւոր յաջո-
գութիւնը: մինչդեռ միւսներուն վար-
չապետութիւնն սեղ մը փորձուած
չէ, և եթէ փորձուի իսկ, յաջո-
ղութիւնն կասկածելի է, քանի որ սկզ-
բունքն պիտի կիրառուի կէս քաղաքա-
կիրթ կամ երբեմն բարբարոս ցեղերու:
Վարչապետութիւն կամ սկզբունք մը
իրական ոյժ ունենալու համար իրողու-
թեան մը համապատասխանելու է: Ինչ
օգուտ ունի յայտարարել թէ «բոլոր մար-

դիկ իրարու հաստար ստեղծուած են»,
քանի որ մարդկային ընկերութեան բո-
ւոր անդամք դաստարակութեան և փոր-
ձառութեան համանման արտօնութիւն-
ները վայելած չեն: Անքաղաքակիրթ
ժողովուրդաց տալ ինքնօրինութեան հե-
ղինակութիւնը՝ մանկուն մը ձեռքը կրակ
տալու պիտի նմանի: Սակայն եթէ այս
նորստաց գաղթականութիւնք այս երկ-
րին իւր ամբողջական մատուցէ և իւր
թէրթորները կառավարուին, յայնժամ
ամենայնիւ Միացեալ Նահանգաց քաղա-
կան հաստատութեանց վրայ պիտի ձեռու-
ին: Բուն մը, որ անոնց տեղական և ըն-
կերական մասնաւոր պարագայից չկըր-
նար յարմարիլ: Ազգեր ինչպէս նաև ան-
հասանք ինքնավարութեան պարզին մէջ
քիչ ասանի մէջ ընթացաւարտներ է չեն
կրնար լինիլ: Ամերիկեան ազգն իւր ե-
տե ունէր Անգլիոյ քաղաքական կենաց
դրարու փորձառութիւնը, և անոր վը-
րայ ձեռնք իւր քաղաքական հաստատու-
թիւնները: Առանց ի նկատի ունենալու
գաղթականութեանց կարողութիւնները
յարմարութիւնները, տեղական պարա-
գաները, մինչև անգամ նախապաշա-
րուները, անոնց վրայ պատուատուել
այս երկրին քաղաքական կենեքը՝ այս
գաղթային ձեռնարկութիւնը անյաջո-
ղութեան պիտի մատնէ: Կայսերակա-
նութեան մէթոտին ջատագովք կրնեն
թէ գաղութներուն տեղական կառավար-
ութեան ձեռն ամենեւին յարաբերու-
թիւն ունենալու չէ Միացեալ Նահանգաց
կառավարութեան ձեռն հետ: Գաղութք
կառավարուելու են իրենց իսկ տեղական
և ընկերական պարագայից պահանջնե-
րուն համեմատ: Եթէ այս սկզբունք
առաջնորդող աստղ մը ընտրուի, յայն-
ժամ Փիլիպպեանց կառավարութեան ձեռն
Հայկեանց կառավարութեան ձեռն, և
Բուպայի կառավարութեան ձեռն Փորթո
Րիբոյի կառավարութեան ձեռն տարբեր
կրնայ լինիլ: Եւ հարկ չկայ որ որեւէ
մեծ ազգի մը գաղթային ընդհանուր
կառավարութիւնն ձուլեալ միօրինակու-
թիւն ունենայ: Անգլիա նոյն գաղթային
կառավարական ձեռն հաստատած չէ Հնդ-
կաստանի, Եգիպտոսի, Պիրմայի, Մալայ
նահանգներուն, Հոնկ Բոնկի և Սինկա-
փոյի մէջ: Սակայն անոնցմէ իւրաքան-
չիւրին մէջ հիմնադրած է կառավարու-
թիւն մը որ այդ մասնաւոր հասարա-
կութեան կարօտութեանց և ընկերական
պարագայից ամենէն աւելի կը յարմար-
ի: Թերևս վարչական հակասութիւն կար-
ծուի տեսնել թէ Անգլիա իւր գաղութ-
ները կառավարելու մէջ տեղ մը միա-
պետական, իսկ ուրիշ տեղ մը հանրապե-
տական դրութիւն որքեզրած է: Զոր
օրինակ, Բանտա և Աւստրալիա սկզբաբ-
նա զորժտրութեամբ կատարելապէս հան-
րապետական են, իսկ Հնդկաստան նոյն-

չափ միասնական է: Պատճառն յոյժ պարզ է: Առաջնոց ընկերական պայմանք զայդ կը պահանջեն, իսկ վերջնոյն զայս:

Անգլիոյ գաղթային այս կառավարութիւնն գիտական սկզբանց վրայ հիմնուած է, և կը ցուցնէ մարդկային հոգեբանութեան մեծ հմտութիւն: Անգլիոյ գաղթային փառաւոր դրութիւնն դառն և բազմաձախ փորձառութեանց արդիւնք է: Հարկ չկայ որ Միացեալ Նահանգք նոյնքան սուղ սովորին իրենց քաղաքական դասերը, քանքի իրենց առջև ունին Անգլիոյ օրինակը:

Թէ կայսրութեան տարբեր մասունք դէպի մայր երկիրն ուղարկ սէր և ուրիշում ունին կրնայ շափուիլ իրենց ըրած զոհողութիւններէն Պոնդրեբու այս պատերազմին մէջ: Թէ Գանատա, թէ Աւստրալիա և թէ մինչև իսկ Հնդկաստան սիրայօժար գտնուեցան տալ կայսրական կառավարութեան բոլոր նիւթական և բարոյական ոյժը, որում պէտք կար ջանջախելու Հարաւային Ափրիկէի ասպտամբութիւնը: Ինչո՞ւ, քանքի Անգլիա անձնանուէր մօր մը պէս կը խնամէ իւր գաղթային զաւակները: Ասոր իւր օրինակ առ մաքսային դրութիւնը: Անգլիա բաց ի մի քանի նիւթերէն ուրիշ առարկայից մէջ ազատ մաքսի երկիր է: Իւր գաղթականութիւններէն ինչպէս նաև օտար երկիրներէն իրեն ապրանք կրնայ ներմուծուիլ առանց մաքսի: Սակայն երբ ինքն ապրանք կարտածէ ուրիշ երկիրներ ինչպէս նաև իւր իսկ գաղութները, ամբողջական մաքս կը վճարէ: Գաղթականութիւնը թէ և կայսրութեան սմբողջացուցիչ մասունք են, ստիպուած չեն ամենայնիւ համակերպիլ մայր երկրին սովորութեանց և գործառնութեանց: Իրենց մաքսային սակերը կ'որոշեն իրենց իսկ տեղական և ընկերական պահանջներուն համեմատ: Այս օրինակ մը չէ՞ մայրական վեհանձնութեան դէպ իւր գաղթային զաւակուն:

Սակայն տես Միացեալ Նահանգք իրենց գաղթային վարչութեան առաջին տարւոյն մէջ իսկ մաքսային մեծ սխալ մը գործեցին: Փորթո Րիքո աղքատ կըլէր մէջ, և ներքին զարգացման համար պէտք ունի ամէն կարելի դրամական խնայողութեան: Նախագահ Մէքլինլը գաղթի կղզւոյն նիւթական անձուկ վեհակը իւր տարեկան Պատգամադրոյն մէջ Գոնկրէսին յանձնարարեց որ Փորթո Րիքոյէ ի Միացեալ Նահանգք ներմուծեալ ապրանքէն մաքսային տուրք չառնուի: Այս մարդաորակ կարգադրութիւնն սակայն ամերիկեան մի քանի վաճառականական տուներու անձնասիրական շահերուն չէր յարմարէր: Եւ ուստի Գոնկրէսին վրայ ամէն երեւակայելի և աներեւակայելի ճնշում բանեցուցին Նախագահին առաջարկութիւնը ամլութեան տուրք հաստատեցին Փորթո Րիքոյէ ներմուծեալ ապրանք վրայ: Խնդիրն այսպէս կարգադրուեցաւ ոչ որպէսզի կեդրոնական կառավարութեան եկամուտն աւելնայ, քանքի պէտք չունի այնմ, ալ որպէսզի մի քանի ձեռնարուեստական հաստատութիւնք պաշտպանուին: Փորթո Րիքոյիք երախտապարտ չեն կրնար դալ առ Ամերիկա ստոր համար: Այս էր Սպանիական մէթոսն— շահագր ծել գաղթականութիւնները յօգուտ մայր երկրին, և այս եղած է ընթացքն այն ամէն կառավարութեանց որք գաղթային վարչութեան մէջ ընաւ յաջողած չեն իւր մեծ պետութիւն: Յրանս առ ընդ օրինակ մը կրնայ համարուիլ այս անյաջողութեան: Եթէ Փորթո Րիքո Անգլիոյ թևակութեան տակ լինէր, մաք-

սային խնդիրն բոլորովին կղզւոյն ժողովրդեան նպատաւը կերպով պիտի կարգադրուէր: Այս է լուսամտ կայսերականութեան գիտական կիրառումն:

Միացեալ Նահանգք իրենց նորոտաց գաղութները կառավարու մէջ ուրիշ գծաւորութեան մը ևս պիտի հանդիպին, որ ծագում պիտի առնու կարող և արեւելագոյն պաշտօնէից չգոյութենէն: Անգլիա ունի աշխարհի կարողագոյն երմտագէտները և կառավարիչները իւր գաղթային ծառայութեան մէջ: Մարդիկ որ երկար տարիներու ընթացքին մէջ եփած են վարչական գործոց մէջ: Լորտ Բըրքըն ի Հնդկաստան իւրաքանչիւր յեղափոխութեան ասոր հոյակապ օրինակներն են: Ամերիկեան պաշտօնատարք չեն ճանչնար մանաւանդ արեւելեան ժողովուրդները, և ուր որ երթան ամերիկեան հասարակութեան մը մտնորակարը հաստատել կուզեն: Մինչդեռ անգլիական վարիչք սկզբուցը անվերջար պահելով հանդերձ մանրամասնութիւնները անզական պարագայից կը համակերպեն: Ամերիկեան միտնարք նոյն սխալը գործած են ի թուրքեա: Երբ ինկէնայի ժողովականութիւնը հաստատել ջանացած են հոն, մինչդեռ Բողոքականութեան Եպիսկոպոսական ձեռնաւելի կը յարմարէր անզական պարագայից:

Սխալ չհասկցում: Ըսել չեմ ուզեր թէ Միացեալ Նահանգք մէջ չկան վարչական կարողութեան տէր մարդիկ, որք կրնան տնօրինել կառավարական գործեր: Այլ, ընդհակառակն մարդիկ կան, որպիսի է Գուպոյի ընդհանուր կառավարիչ Տոթթոր Լէնըրս Վուտ, որք որեւէ կառավարական և վարչական գիրք պատուաւորապէս լեցնելու կարող են: Սակայն Ամերիկայի մեծագոյն հանձնարք իրենց կորովը վաճառականութեան կուտան, և կառավարական պաշտօններու վրայ տեսուի մը արհամարհանք կամ անտարբերութեամբ կը նային: Ասոր զըլլաւոր պատճառը փնտնելու ենք կառավարական պաշտօններուն ժամանակաւոր և անտոյգ լինելուն մէջ: Անգլիոյ մէջ ամենեւեմտարբերութիւն չընէր թէ պաշտօնի վրայ եղող կուսակցութիւնն պահանջական թէ ազատական է, երկրին զիւսանալիական և գաղթային ծառայութեան մէջ եղող պաշտօնատարք նոյն կը մնան: Անգլիոյ հաստատուն քաղաքականութիւնն է պահել պաշտօնատարք իւր պաշտօնին մէջ ցորչափ նա կարողութեամբ և պարիճտութեամբ կը տնօրինէ իւր գործերը: Միացեալ Նահանգք մէջ հիմնովին տարբեր է դրութիւնն: Ամէն չորս տարի անգամ մը նախագահական ընտրութեանը ատեն արտաքին գործոց նախարարէն ցյեալին կառավարական պաշտօնեայ կը փոխուի, հոգ չէ թէ մարդն իւր գիրքը արժանաւարապէս կը լեցնէ: Այս անկայուն վիճակն կառավարական գործերը խորշելի ըրած է յաջ կարողագոյն անձանց: Հետեւապէս կառավարական գիրքեր կը գրաւուին յաճախ անկարող և անպարկեշտ հացկատակներէ: Անչուշտ ազնիւ բացառութիւնք մը լըտ յարգելի են: Միացեալ Նահանգք ծառայութեան մէջ մտնելու համար կարող և պարկեշտ մարդ մը երկու շարժառիթներ կրնայ ունենալ. կամ շատ հարուստ կը լինի, և ժամանակաւոր կառավարական պաշտօն մը կազմուի ինչ փոփոխութիւն մը կը նկատէ, և կամ հայրենասիրական պարտականութիւն մը կը համարի իւր երկիրն ծառայել:

Վերջերս առաջարկուած է որ Ուաշինգթոնի մէջ դիւանատարական դպրոց մը հաստատուի, ուր արեւելագէտներ

պարաստուին երկիրն գաղթային ծառայութեան թէլ գործածուելու համար: Ահա մի քանի մեծ գծաւորութեանց որք կը յուզեն այժմ ամերիկեան հանրային միտքը: Սա ստոյգ է թէ եթէ գաղթային վարչութեան մէջ կայսերականութեան մէթոսն որդեգրուի, որ ամենէն գործնական կերպն է, Ազգային Սահմանադրութիւնն բարեփոխման պիտի ենթարկուի:

Յուսանք թէ այս կարևոր խնդիրք նորոտաց գաղութներուն զարգացման նպատաւը լուծում մը ստանան:

Հ. Ս. ՃԻԼԱՔԵԱՆ

ԴԱՇՆԱԿԿՈՒՄԱՆ ՅԻՇՏԱՍԿԱՐԱՆԷՆ

Դաշնակցութեան այդ մէկ հիմնադիրը սկսեց մէկ մէկ գառն տալ միտմիտ ու հայրենասէր երեսասարդներու ձեռքը բռնել ինքնով զրամ հաւաքելու: Գրիչ տանէն ռոկիներու գումարը 800 ի հասաւ, որը յաղարդու լիակեր ներկայացուցին գրպանը մտնելէն ետքը ալ ոչ ոք կրնար գիտնալ թէ անոնք ինչ բանի կը գործածուէին:

Յիշատակարանի նախորդ մասին մէջ տեսնուեցաւ այն իշխանական շատյի գեանքը որով Պ. Մեյլիք Գրիգորեան կը մտնէր հասարակաց փողը: Ատկէ զատ մի գրիչը պարսից հիւպատոսարանը պահուելու համար Պ. Մեյլիք 80 լիրա տուաւ հիւպատոսին: 5 լիրա հիւպատոսարանի խաղաղներուն և ստիպուով ուսուստան երթալու համար կառավարիչ վճարեց 10 լիրա: Իր այս պիտով Ռուսաստան խրկուելուն օգնեց այն պարագան ար ինքզինքը իւր գրիչի (սամուր) վաճառական ներկայացուց:

96 ին կողման գայի: Հոն էր հայոց ազատայ Մարտիկը որ կը ընակէր չքեղ պաղովի մը մէջ ու «Ինձ մի թող մ'ուրիմ» ընելով կառքով կը ուղարկէր:

Չարամելիք կրմանայ իմ իր կեցած քաղաքը լինելու, ինծի լուր խրկեց որ երթամ զինք տեսնելու: Այս յեղափոխութիւնը շահագործող անպիտանները տեսնելէ ալ զգուած էին: Երկրորդ անգամ զիս թախտեմբու համար Հ. զրկեց: Այդ օրեր Դաշնակցականներուն մէջ տարածայնութիւն մը կար թէ իւր մեծ արշաւանք մը ընելու կը պտտաստուին: Խորհուրով թէ թերեւս ասոր համար է որ Չարամելիքը ինձ տեսնել կուզէ և մտածելով նաև թէ թերեւս կրնամ որեւէ օգտակար ծառայութիւն մը մատուցանել. երթալ որոշեցի, ու քացին: Սակայն այն ինչ ստիպում էր որ զգայի, երբ ասոնց թէ ևս ինչ բարի մտածումով զացի ու անոնք ինչ գծովային գործ կուզեն կատարել իմ ձեռքով:

Երբեմն խնամ աղքեցիկ Դաշնակցական ու յայնժամ «Միտ թե՛նականց» պետ. Ենովք. (կեղծ անունը վարդան ու երբեմն Պաղտատար) որ իր բարձր զարգացումով և անկեղծ յետափոխական մաքուր նկարագրով ուսուսայ հարուստներու վտտահութիւնը գրաւած էր իր վարիւրը ալեւ Դաշնակցականաց հաշուոյն գործածելէ զարեցուցնելէն զատ, անոնց վարկին ը փնտնէր ալ: Նա երբ կը խօսէր Դաշնակցականներու մասին կըսէր: «Այդ կուսակցութիւնը բարոյսպէս անանկացեր է, անոր զեկավարներուն վրայ երբ կը նայիմ, չեմ կրնար կարծել թէ չայ են անոնք. անիկոյ ապականութիւնով լեցուած աղբակոյտ մը է զանիկայ մաքրելու ճար չկայ. անկէ հետեւալը միակ միջոցն է»:

Ահա այսպէս Պրն. Ենովք իր դաշնակցութեան հետեւալով ու անոր զէմ խօսելով թե՛նականներուն ողնայարի սիւնի կոտորած կը համարուէր: Ուստի ըստ Դաշնակցութեան սկզբունքին հարկ անհրաժեշտ էր այդ «Ֆիասակար անձնատրութեան» կեանքը աշխարհէս վերցնել: Բոու կառավարութիւնը ատենէ մը իվեր էր որ ամէն կողմ ջանք կը գործէր Պրն. Ենովքը ձեռքարկելու հրամար, և մեծ վարձատրութիւն խոստացած էր անոր ուր գտնուեցրուն վրայ ծանօթութիւն

առողին (մտանդին): Չարամելիքը արգէն ուսուստիականութեան յանձնած էր Կրն. Ենովքին լուստակարը, բայց այդ քանը բուսական չէր համարէր Չարամելիքը. քանի որ Պրն. Ենովքը կապրէր ու բանասիրուած չէր:

Չարամելիք իմացեր է որ Պրն. Ենովք այդ օրեր այդ քաղաքին մէջ երեցեր ու ինծի հետ ալ տեսնուէր է. ուստի Չարամելիքին զիս տեսնելու ուզելու նպատակն այն է կղեր որ ինձմէ իմանայ Պ. Ենովքի տեղը, որպէս զի մտատնէ ուստիականութեան սակայն արգէն մեր ընկերներուն կարենցի նշան Պ. Ենովքին կանցիզգեհաւ հազգուցած ու քաղաքէն հեռացուած էր:

Նոյն օրը որ գնայի Չարամելիքը տեսնելու. ծոցս ունէի Պ. Ենովքէն և Գաղաքի կոմիտէին ուղղուած տոսմ մը որով իրեն յանուելու համար Պաղտատար Ա. Ի կողմանէ յիշեալ կոմիտէին զրկուած 200 Րուբլիի գումարը կը պահանջէր: Տոսմ հետեւալ կերպով գրուած էր. «Ի. Գաղաքի Դաշնակցական կոմիտէին. Պարտենք իմ կարին եզած պահուս Պագուցի Ա. Ինձ համար ձեր միջոցաւ 200 Րուբլի զրկած էր և մինչև ցարդ ձեր քով կը պահէք չեմ գիտեր ինչ նկատումներով. իմ կողմէս վերատարածիս երբ Ա. անկեկացու իւր զրկած գրամին ինձ չի հասնելն ձեզ նից ետ է պահանջում բայց դուք անմտօքարար գրած էիք թէ «Ջեր Պ. Ենովքի համար խրկուած 200 Րուբլին ապահով իրեն հասցուցած ենք» ևս քանիցս ձեր քով մարդիկ ուղարկեցի և զր մ'պահանջեցի բայց դուք միշտ ա ռարկածէք, կամ իրիւր մարդուս վրայ վախաւորել ձեռացնելով և կամ նամակներս կեղծ նկատած էք այժմ ձեզ կը ներկայանայ Կ. Գաղաքի Հինջ. Մաք. վարչու տնիքամ Պ. Ծանօթ ամենուրէ հոսնչեք այն գրամ իրեն վճարելու եւ իր քով իմ ստորագրութեան տակ ընկալաք իմ օւնիմ գրամը ստանալուն ձեզ պիտի յանձնէ»:

Օր մը վարդանի գրամի համար Կ. քաղաքի Դաշնակցութեան կոմիտէի վարչութեան զինքի, նամակի ներկայացնելուս պէս ինձ պատասխանեց «Եթէ Երկրիցէն Աստուած ինչէն չենք տար դըմարմը եթէ Պաղտուցի Ա. Ե իսկ ներկայանայ չենք տար, Ենովք պէտք է երեսա երես տեսնեք, ինչ տխուր բան. յեղափոխութեան անուրը կրող կորեւոր կոմիտէ մը մտանութեան զերը կուզէ կատարել. Ենովք կուզեն երեսա առ երես տեսնել որպէսզի ձերակալել տան. Հաստատա արիւրներէն ըստուգած էի թէ ոչ միայն Ենովքի համար խրկուած 200 Րուբլին այլ կոմիտէի անունով հաւաքուած խեղճ գրիցողին ճակարի քրտինքով գոյացած կողմէններ որ հազարաւոր Րուբլիներ կը հասնէին Ն. Եանցի և Տ. Եանցի կրկորդն անցած են: Ասոնցմէ մին քաղաքին նշանաւոր բարեպիտալի հերոսը իսկ միւրը սնարոյականութեան հեղինակ Կիրիլի Լօզին էր: Եկեղեցի ԳՈՒՐԿԷՆ

(Շարունակելի)

Ուշիմ Հոյուքն Ն. Ժ. 1900 Մարտ 26

Ալ ձանցրացանք այս կոմիտականներն:

Այս անգամ Եկեղեցւոյ շինութեան գործերուն մէջ են աճ պարարներն: Անցեալ կիրիի սեզոն այցելած էր Ա. մերկայի Հայոց Առաջնորդ Գեր. Յով. Եպիսկոպոս Սարաճեան. վիճակիս Եկեղ. քարծերն կարգադրելու, մասնաւորաւոր իւր քաղաքական խօսքերով ոգեւորելու գծովուրդն և զիւրացնելու կեղծ. շինութեան գծաւոր գործն: Բայց նախապարաստած դէպքեր խանգարելին ժողովն: Այլ թիւղա անուն թրքացած հայու որդին Ռուստամ Չարաւանեան իր քաղաքական ընկերակիցներով փորձեցին ձեռնել Սրբազանը, բայց ժողովուրդը վերջ գրաւ Դաշնակցականներու այս ցածոգի ճակատամարտին. որ կը մղէին անձնէր Եպիսկոպոսի մը դէմ, լուսանքներ ցայտելով անոր ամենամեծին որ զինքն ձեռնադրելով հոս



Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ
Մ Ե Ր Ա Ք Ա Ն Ա Կ Ե Ւ Փ Ո Ք Ր Ա Ք Ա Ն Ա Կ
Ս . Տ Ա Մ Պ Ո Ւ Ր Ա Ճ Ե Ա Ն
Ն իւ - Երբ 509 2րդ . Ավինո

Տեղական և Արեւելեան բազմասե-
սակ նպարեղեններ, լաւագոյն աեասկ
ընդդեմներ, եզանակին համեմատ բան-
ջարեղեններ և սուրբայ թարմ միս: Հայ-
կական պանիրփառուտը 13 սէնթ մեծա-
քանակ գնողաց 12 սէնթ: Ուտարի պա-
սուական Պլուսը և Մեծած փառուտը 3
սէնթ մեծաքանակ գնողաց համար 2½,
2իթապուղ (գէլթուս) փառուտը 10½,
մեծաքանակ գնողաց մասնաւոր գէլթ
կընեմ, 5 փառուտի քէն սուրայ համար 25
սէնթ մեծաքանակ գնողաց 20 սէնթ հա-
տը: Մեր քով միշտ պատրաստ կայ
Հայկական ամեն տեսակ ապրանքներ, ա-
ղը դրուած եսփրազ, ընտիր կորկոս,
անթապ հալվարի, կանտնչ գէլթուս:
Չէլթուս եաղի (ընտիր տեսակէն) մա-
քառուտի լօքուս տեսակներովը, սպա ալ-
ցուած կամ չաղցուած, սուսմիս, սրսեռ
Պօլոյ խաշար պանիր, Լէպլէպլի շաքա-
րի տեսակներով, քիմիոն, անտոն, պա-
տուական խունկ, աղւոր ալիւրէ հաց
2 հատը 5 սէնթ, կայն... Նամակով ե-
ղած յանձնարարութիւնը փութով և բիշ
վարձքով կը կատարենք մեր յատուկ
կառքով: Վճարու ճիւղեր կանխիկ են և ոչ
ապագիկ:

Ա. Չ. Գ.

Նկատելով որ Ամերիկայի մէջ կազ-
մուած Հայ դերասանական խմբերի գլ-
խաւոր պահանջներէն մին Դերասանուհի
չգտնուելէն է այս երկիր . խումբս իր այդ
պահասը լրացնելու ամէն ջանք ի գործ
դնել որոշած է . այս առթիւ կը դիմենք
հրապարակային յայտարարութեամբ Հայ
օրերգի մը որ ունենայ բաւական յար-
մարութիւն ու կարողութիւն և կը փա-
փաքի խումբին մէջ մտնել իրր դերա-
սանուհի օրինաւոր գոհացում և վարձա-
տրութիւն պիտի ստանայ: Դիմել շա-
Աղաճեան Դեր . Ոմբ .
171 ֆ . Օ . Պօքս
Լին Մաս

ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ

ՄԻՀՐԱՆ, ՏԱՄԱՏԵԱՆԻ
ԵՐԳԵՐ
ՍԶԿՍԵՐԵՆ ԵՒ ՅԵՂԱՓՈՒՍԿԱՆ
ԱՐԴԻ ԿԵՆՏՐԷ
Գին 25 Սէնթ
Ուրիշ քաղաքներու համար փոստի
ծախքը իրենց վայ է:
Դիմել .
S. RUSDIKIAN,
P. O. Box 46, Station A,
WORCESTER, MASS
Նաև
Պոստոն Պ . Ա . Աղբանազի և
Բրոքլինգէն Պ . Մ . Տէր . Պոստոնանի քով:

ԿԱՐԵՒՈՐ ԱՁԴ

Ճաշակի յարմար պատուական ապուխտ
(Պայտէրի Պատարմոյ) կը պատրաստ
անմ . գինն է՝ փառուտը 35 սէնթ . վա
ճառման կեդրոնասեղին .
S. ՍԵՄԵՐՃԵԱՆ
113 TYLER ST BOSTON MASS.
Մ Ե Ր Ն Ո Ր Հ Ա Ս Ց Է Ն
ԱՍԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ . ՀՐԱՏ . ԸՆԿ .
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
AMERICAN HAI PUBLISHING CO.
P. O. Box 379,
WORCESTER, MASS

Ա.Չ.Գ.

Կը ծանուցանենք Հայ հասարակու-
թեան թէ՛ Պոսթոնի թայլըր փողոցին մէջ
նոր խանութ մը բացած ենք, ուր կը վա-
ճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵ-
ՂԵՆԵՐ ՉԱՓԱՒՈՐ ԳՆԵՐՈՎ:
Յանձնարարութիւնք կը կատարուին
փութով և խնամով:
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ
ԱՐԱՄ ԱՍՔԱՆԱՉ

Մեր հասցէն է
Tyler Grocery Co.
113 Tyler St. Boston Mass.

ԿԱՐԱՊԵՏ Յ . ՓՈՓՈՋԱԿԱՆ

NEW YORK LIFE INSURANCE CO.

ՆԻՒԵՐՔԻ ԿԵՆՍԵՏ ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գործակալութիւնը ըս-
տանձնած է, և անձամբ կամ նամակաւ
իրեն գրիողները կապահովագրէ ճիշդ
և ուղիղ պայմաններով:
Նիւ Եօրք կենաց ապահովագրական
Ընկերութիւնը աշխարհի ամենէն մեծ
միջնադարային ապահովագրական ընկերու-
թիւնն է, 82 Կառավարութեան ճանչցու-
ած և անոնց Օրէնքներով վաւերացուած:
Այս նիւթին վրայ պատրաստուած եմ
համառոտ տեղեակ մը զոր կը զբիւր-
ամեն անոնց, որոնք կը շահագրգռուին
այս խնդրով և կը փափաքին որոշ անդէ
կաթիւններ ստանալ:
G. H. Papazian,
15 Temple Place,
Boston, Mass.

ՆԱՍՈՒՆ ՏՈՄՍԵՐ

Նպարավաճառ . Նաւային տոմարին
բաւ գործակալատար Ֆրէնչ, Բիւնարա, Տօ
միւնիւրն . Ամերիկեան և Բէտսթար գէն
բուս:
Ա. Ենամօն գնով տոմար կուտանք
դէպի Ֆրանսա (Մարտէլ) և անկէ հաս:
Մեր տեղէն է հոշկալար Մարութեան
նի կից:
HARRY AIRONEN,
24 Academy St.,
Fitchburg, Mass.

ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌԱԿԱՆ

Պօլոյ, Վեներտիկի, Մ . Մամուրեանի
և Տիկին Բոֆֆինի հետ մասնաւոր կորգա-
գրութիւն ըրած՝ Նաև ուրիշ գրատուներէ
ալ զըբքեր բերել տպու միջոցները ձեռք
բերած ըլլալով՝ կուտանք գրատէր հայրե-
նակցներու ծանուցանել թէ իրենց փա-
փաքած գըբքերը սովորական գնով կարճ
ժամանակի մը մէջ՝ բերել աւալու պատ-
րաստ եմ . քիչ ժամանակ վերջը մեր
քով արգէն պահուտի պիտի ունենանք
ամէն ժողովրդական գրեանց շաք մը:
Փափաքողաց գրացուցակ կը զբիւրենք:
Մեծ քանակութեամբ գընողներու՝
մասնաւոր գէղջ կընենք:
Դիմել Պ . ՊԵՏԻՇԵԱՆ
390 ֆ . Օ . ՊՕՔՍ
10ՎԷԼ ՄԷՍ .

ԲԱՑՈՒՍԵ Է

ԲԱՑՈՒՍԵ Է
ՊՍԵՆՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
«ՉԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՅԻ»
Բ . Ր . Պ . Վեց ամսեայ
Ներկա թուէն մինչև Սեպտեմբեր՝ 85
սէնթ . Սեպտեմբերէն անդին բաժանորդ
չենք ընդունիր: Նոր բաժանորդագրուիլ
ցանկացողները մեզ գրիկու են 85 սէնթ:
ՄԵՐ ԳՐՈՐԾԱԿԱՆՆԵՐԷՆ
Ստիպողաբար կը խնդրուի որ բարե-
հաճին գրիկել իրենց հաշիւները, մինչև
հրկոյ 26 րդ . թիւը:

ԼՈՅՍ ՏԵՍԱԿ

ՇԱՐԺՈՒՄԸ ԿԵՆՏՐԷ
ԵՒ ԿԵՆՏՐԷ ՇԱՐԺՈՒՄ
Հրատարակութիւն "Ամերիկայի Հայ
Հասարակական Ընկերութեան" (Թիւ 1)
Գինը 10 ՍԵՆԹ
Դիմել վարձութեան հասցէին:

ԿՈՒՉԷՔԻ ԴՐԱՄ ՓՈՒՍԴՐԵԼ

Դիմելիք Ան՝
Սարգիս Գ . Սարգիսեան

1060 ֆ . Օ . Պօքս , Ուտար , Մաս .
Դրամ կը փոխադրենք թիւրքոյ բու-
լոր քաղաքները: Կեդրոնասեղին է Ուտար-
բերք , Տեար Յովհաննէս Ուտարուղեան ,
որ երկար տարիներու գործունէութեամբ
և վարկով հանրաճանաթ է և Կ . Պօլոս Տ .
Գէորգ Ուտարութեան: Մեր Գործակալ
ներն են . Մարութեա Սարգիս Պօնու գ .
Լեան . Չմշկածակ՝ Մէլիկէ՛յր Ինճէ՛յ-
եան . Բալու՝ Գարեգին Քիւր՛ճեան .
Չնքու՛ Յակոբ Տաղաիկէ՛եան: Թիւրքի-
ոյ ուրիշ բոլոր քաղաքներն ալ գրամ կը
փոխադրենք Ուտարեղի միջոցաւ:
Մարտէլի թէ հեռագրով և թէ նա-
մակով գրամ կը փոխադրենք և նաւա-
յին տոմարները կուտանք:
Ուտարի մէջ կը վաճառենք պտմեա
սիկարի թուղթ և ուրիշ շատ տեսակ
Տաճկական ապրանքներ:
Ուտար թիւ հասցէն է՝ 14½ Արշ Սթ .
Ուտար . Մաս .

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ . Մեզ գրամ զըր-

կելու է Մընի Օրարով, կամ Պանքոյի
չէքով:
ԴՐԱՄ ԿԸ ՓՈՒՍԴՐԵՆԷ

Ամերիկեան Հայ դաջթականութե-
ան կուտանք յայտարարել որ հայրենիք
գրամ փոխադրելու դիւրութիւն ընծա-
յելու համար, փոխադրի նոր գործով
սկսած եմ ի Պօսթօն՝ շատ մը բարեկանե-
րու ու ծանօթ հայրենակիցներու թա-
խանձանց դոյացում տարու . աւելորդ է
սչինչ գովաւանել ընդ Ուտարեղի ինչ-
պէս նաև Տիգրանակերտի մէջ հաստատու-
ած Պէրպէրեան կորպորացիոն վարկին
ու վտարութեան նկատմամբ . ինչ որ
արգէն երկար տարիներէ ի վեր կը վայն-
լեն, պէտք է կարճ վտարութիւն ու վար-
կը գործի հրատարակի վրայ: Գործը
պիտի հաստատուէ ու վերջէ զայն, և
այս համ . րձակութեամբ կերպարտարիմ
ամէն անոնց, որք կուզեն ֆ . գրի գործ
ինձ հետ: Օտմ . Լ . \$ 250 կը կուտանք:
Մասնաւոր գործակալատարներու նկատմամբ
բերք, Մարութեա, Տիգրանակերտ, Սերաս
տիա, Հալէպ, Կ . Պօլոս և Մարտիլիա-ինչ
պէս ուրիշ ույլ և ույլ քաղաքներ: Մար-
տիլիայի երկրներու գրամի և ույլ պէս
բերու մասին խնամք և զիւրութեան
միջոցներ կընձեռենք: Հայտնա քաղաք-
ներու դիւրութիւն ընծայելու համար
երկու գործակալներու կը նշանակեմ որոնց
կրնան դիմել . Ուտար . Պ . Գրիգոր Մար
գարեան . 157 Սըմբ Սթ . Նիւ Եորքի և
Նիւ Ջըրզիի Պ . Մարտիրոս Թաճեան
251 Ուիլմ Սթ . Նիւ Եորք
Ինձ նամակ և գրամ դրկողներ պէտք
է հեռուեալ հասցէով թղթակցին .
P. O. Box 2652. Իսկ զիս անձամբ
տեսնել ուզողներ կրնան դիմել՝
344 Cambridge St.,
Boston, Mass.
ՅՈՎՀ . Մ . ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՃՈՒՆ ԵՒ ՀՄՐՈՒՍ ՃՄՇԱՐԱՆ

Յիշեալ ճաշարանս որ կը գտնուի 11 քաղ
փողոցը . ամէնէն լաւ և ընտիր կերակուր-
ներ կը պատրաստուի հաճախորդաց հա-
մար 12 . 13 . տեսակ մեղանոյզ և սովորա-
լուցով հանքերձ, նոյնպէս փեթին կը
պատրաստուի 4 տեսակ փայ միս պանիր
և մրգեղեն . հացը ուղածուն չափ սառաս
է, ուտար սոյն հայտարարութեամբ կը
ծանուցանեմ յարգող հասարակութեան
ով որ կուզէ համեղ և ընտիր կերակուր
ուտել կրնայ փորձել . աղքատները նաև
կը կերակուրին ձրի ըստ կանօնի: Սեն-
եակ ուղողաց համար լաւ հաճութիւն սեն-
եակներ § 2 ուտել և պատկիլ իսկ § 2, 25
սենեակին համեմատ: Փորձեցէք և գոհ
պիտի մնանք:
Ճաշարանապետ
Թ . Մամիկոնեան


Ա. Ն. Ա. Հ. Տ.

Հանգիստ Աղբան, Գրական և Գե-
ղարուեստական . բացուած է Բրք . տար-
ուայ Բաժանորդագրութիւնը:

Հասցէ
ԱՐՇՍԿ 20 ՊԱՆԵԱՆ
6 ԲԼԷՍ Տը Լ'Օտէօն
Բարիկ

ՍՍԱՆ ԷԼԻՄԱՍԵԱՆ

ԼԱՒՈՒՆՏՐԻ գործը որ սորվողին
համար փաքը գրամագլխով կանոնաւոր
շահ մը կը բերէ սշխարհի ամէն կողմը
ուր, քիչ շատ Եւրոպականացու մ կայ, և
որուն սորվողուն այնքան դժուարութիւն
կայ, ևս հակառակ անոր անմատչելի պահ-
ուելու ջանքերուն՝ պատրաստ եմ իմ սոր-
ված բոլոր ճիւղերու սորվեցունել բոլոր
հայրենակիցներէս անոնց որ ինձի կը դի-
մեն, փոխադրելով որ օգտուին այս արհես-
տին դիւրին շահարեութեանէն:
Թուէս երկու ամիս միայն կրնամ
աշակերտ ընդունիլ Պայմաններու մասին
ինձի դիմել անձամբ կամ նամակաւ:
ՍՍԱՆ ԷԼԻՄԱՍԵԱՆ
20 Բր . ոյ . թ . Սթ .
Բրոքլինգէն



ԱՐՄԱՀԱՄԵԱՆ ԵՂԱՐԷ

Օղիլի և Մասթիլայի Պատրաստողներ
Արեւելեան օղիլի և Մասթիլայի անդ
բանիկ և միակ գործարանը ունինք Մ .
Նահանգաց կառավարութեան վաւերաց-
եալ:
Միայն պատուական խաղողէ և շա-
միշէ կը պատրաստենք: Մի խմիք օտար
և անտարբ խմելիքներ . որ չփաստուիք:
Խմեցէք հայրենիքի զուտ օղիլ և մաս-
թիլայի, որ խնամքով կը մաստակաւա-
րենք:
Եթէ որ և է Հայ մը մանուսնը Հայ
բժիշկներ կրնան վաւերացնել ամենա-
փոքրիկ խաղող արտաբիւն մը մեր փոխ-
եաց մէջ, պատրաստ ենք իրենց փորձ-
ուելու համար բոլոր ծախքեր և 500 տարր
ալ գրու վճարել:
Ուտարցիներ կրնան ստանալ օղիլ և
մասթիլայ 111 Summer St. Բրոքլինգէ
մեծ վաճառատունէն:
Ուրիշ քաղաքաց Հայեր կրնան դի-
մել կամ գրիլ ուղղակի մեր գործարանը:
Abraham Bro's
20-22-24 Bank St.
Providence R. I

ԱՁԴ

Ուտարի մէջ կը կարգար սարկիւնիք ի վեր
հաստատուած ենք մեր յատուկ պուլուրի
գործարանը: Սոյն գործին մէջ մեծ փոր-
ձառութիւն ունենալով, ամենալաւ ցր-
րենէ կը պատրաստենք ընտիր պալուրի:
որ իր մտքով խմեմք և ուրիշ լաւ յատ-
կութիւններովն՝ ստանկիլներու և ճա-
շարանապետներու զնահաստութեան ար-
ժանացած է: Կը պատրաստենք նաև նոյն-
պէս ընտիր ծեծած և կորկուս:
Ուտարի ամեն ուղ որ կուզէ ընտիր և
ախորժակով կերակուր ինչեւ պուլուր
և ծեծած ունենալ, թող դիմէ ուղղակի
մեզ: Ապագայները փութով կը կա-
տարուին . մանրամասն տեղեկութեանց
համար պէտք է դիմել Հեռեալ հասցէին:
Ուտար, Պուլուրերի Միացեալ Ընկ .
151 Իւնիլին Սթ . , Ուտար Մաս .
Տաճկական տեսակ տեսակ ապրանք-
ներ ալ կը ձարենք:

ՄԱՐԹԻՆ ԳՆՈ

Վաճառանաց տեսական ամեն կարգի
կահ կարասանց
Հայերը սոկէ պատշաճաբոյն տեղ
չեն կրնար գտնուիլ Երևու, մահճակալ,
մեթիլ, սեղան, շեանց, կարպետ և որ
ի կարգին:
Հասցէն է՝
MARTIN KEENOW
79 Green St. : Albany N. Y.